ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՇԱՐԺԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Անդրեասյան Ա. Ս.
ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի թիվ 3 միջնակարգ դպրոցի բնագիտական մասնախմբի նախագահ, աշխարհագետ-ուսուցիչ, andreasyn.asa@gmail.com

Ոչ մեծ ազգերի համար ճակատագրական նշանակություն ունի բնակչության թվաքանակի և բնակչության բնական աճի կայուն պահպանությունը: 1920-1989 թթ.. հայ բնակչության թիվը Հարավային Կովկասում, ներառյալ այսօրվա Հայաստանը որոշակի կայուն աճ է ունեցել: Այլ իրադրություն է ստեղծվել ԽՍՀՄ փլուզումից հետո (տես աղ. թիվ 1): Այդ ժամանակաշրջանում հայ բնակչության թե՛ բացարձակ թիվը և թե՛ դրա տեսակարար կշիռը աստիճանաբար սկսեց նվազել ողջ տարածաշրջանում ու դրա բոլոր սուբյեկտներում, ներառյալ ՀՀ-ն: 1979թ. տարածաշրջանի 14մլն.74հազար բնակչությունից 3մլն 648 հազարը կազմում էին հայերը, կամ ընդհանուր բնակչության 25,9%: 1989թ. մարդահամարի տվյալներով Հվ. Կովկասի բանակչությունը 15մլն. 783հազար էր, որից հայերը կազմում էին 3մլն. 916 հազարը, կամ 24,8%-ը: Չնայած բացարձակ թվով այն ավելացել էր 268 հազարով, սակայն տեսակարար կշռով նվազել էր 1,1%-ով :



Նկ. 1 Բնակչության թվի բաշխվածությունը Հարավային Կովկասում ըստ երեք գլխավոր ազգությունների՝1989թ. /ըստ մարդահամարի/ և 2018թ./գնահատում/, %-ով :

Համառոտակի բնութագրենք բնակչության շարժի փոփոխությունները ըստ երկրների.

Հայաստան: Ինչպես տարածաշրջանի մյուս երկու հանրապետություններում այնպես էլ Հայաստանում հայ բնակչության թիվը խորհրդայնացումից մինչև 20-րդ դարի 80-ական թվականների վերջը կայուն կերպով աճել է: Ավելացել է նաև հայերի տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության կազմում: Հետխորհրդային տարիներին կայուն կերպով նվազել է հայերի բաժինը տարածաշրջանի բոլոր սուբյեկտներում և ավելացել ՀՀ-ում: 1989թ. ՀՀ-ում ապրող հայերի տեսակարար կշիռը Հվ.Կովկասում 78,8% էր,իսկ 2018թ.ին՝ 89,6%: Ներկայումս ողջ տարածաշրջանում ապրող 3մլն 347հազար հայերից 3մլն 2 հազարը ապրում է ՀՀ-ում:

Աղյուսակ 1

Բնակչության թվի փոփոխությունը Հարավային Կովկասի երկրներում, այդ թվում, մասնակի ճանաչված և չճանաչված հանրապետություններում (1959-2018թթ.):

N	Տարի	Հայաստանի Հանրապետություն		Վրաստանի Հարապետություն				Ադրբեջանի Հանրապետություն			Ընդամենը Վրաստանում, ՀՀ-ում և Ադրբեջանում		
		Բնակչության թիվը, հազ. մարդ		Բնակչության թիվը, հազ. մարդ				Բնակչության թիվը, հազ. մարդ			Բնակչության թիվը, հազ. մարդ		
		Ընդամենը	Հայերի թիվը	Հայերի տեսակարար կշիռը (%)	Ընդամենը	Հայերի թիվը	Հայերի տեսակարար	Ընդամենը	Հայերի թիվը	Հայերի տեսակարար կշիռը (%)	Ընդամենը	Հայերի թիվը	Հայերի տեսակարար
1	1959	1763	1552	88	4044	443	11	3698	442	12	9505	2437	25,6
2	1970	2492	220	88,4	4686	452	9,7	5117	486	9,5	12295	3141	25,5
3	1979	3031	2725	89,7	5015	448	8,9	6028	475	7,9	14074	3648	25,9
4	1989	3305	3084	93,3	5440	441	8,1	7038	391	5,6	15783	3916	24,8
5	2001	3213	3145	97,7	4372[1]	249	5,7	7953[2]	0	0	15538	3394	21,8

6	2011	3020	2962	98,14	3730[1]	168	4,5	8923[2]	0	0	15673	3130	20
7	2018	3048	3002	98,5	3857	158	4,1	10148	0	0	17053	3160	18,5

1.Վրաստանի հանրապետությունում մարդահամարները անց են կացվել 2002 և 2014թվականներին 2. Ադրբեջանի Հանրապետությունում մարդահամարները անց են կացվել 1999 և 2009 թվականներին

N	Տարի	ԼՂՀ			Աբխազիա			Հարավային Օսիա			Ընդամենը Հվ.Կոովկասի չճանաչված/մասն.ճան / հանրապետությունում		
		Բնակչության թիվը, հազ. մարդ			Բնակչության թիվը, հազ. մարդ			Բնակչության թիվը, հազ. մարդ			Բնակչության թիվը, հազ. մարդ		
		Ընդամենը	Հայերի թիվը	Հայերի տեսակարար	Ընդամենը	Հայերի թիվը	Հայերի տեսակարար	Ընդամենը	Հայերի թիվը	Հայերի տեսակարար	Ընդամենը	Հայերի թիվը	Հայերի տեսակարար կշիռը , (%)
1	2005	137,7	137,4	99,7	216[3]	44,9	20,8	69[4]	0,7	1	422,7	183	43,3
2	2015	145,1	144,7	99,7	240,7[3]	41,9	17,3	53,5[4]	0,4	0,7	439,3	187	42,6
3	2018	150	149,5	99,7	244	38	15,6	51	0,3	0,6	445	187,8	42,2

1.Աբխազիայի հանրապետությունում մարդահամարները անց են կացվել 2003 և 2014թվականներին, 2. Հվ. Օսիայի հանրապետությունում մարդահամարները անց են կացվել 2008 և 2015 թվականներին

ԱԴՐԲԵՋԱՆ: Ներկայիս Ադրբեջանի տարածքի մեծ մասը պատմական Հայաստանի մի հատվածն է, ուր հայերն ապրել են հազարավոր տարիներ: 1926-1970թթ. ընկած ժամանակահատվածում հայերի բացարձակ թիվը Ադրբեջանում ավելացել է, իսկ 20-րդ դարի 70-ական թվականների կեսերից սկսել է նվազել: 1989թ. տվյալներով հայերը կազմել են Ադրբեջանի բնակչության մոտ 5,6% /391 հազար/: Ղարաբաղյան շարժման զուգահեռ հայ բնակչությունը Ադրբեջանից գրեթե ամբողջովին դեպորտացվեց, իսկ մի մասն էլ պարզապես ենթարկվեց ջարդերի: Անկախությունից հետո Ադրբեջանում փաստորեն հայեր չեն մնացել, որի մասին վկայում են 1999 և 2009թթ. իրականացված մարդահամարների արդյունքները: Շատ արագ հայազրկվեց նաև Նախիջևանը: 20-րդ դարի սկզբում հայ բնակչության տեսակարար կշիռը 42,2%-ից դարի վերջում իջավ 0,37%: Ներկայումս Նախիջևանի 440 հազար բնակչության 99,98% կազմում են ադրբեջանցիները: Այսպիսով հարավային Կովկասի այս հանրապետությունը, ներառյալ Նախիջևանը ամբողջովին հայաթափված է:

ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱՂ: Հայերը միշտ էլ կոմպակտ ապրել են Արցախ-Ղարաբաղում,որտեղ մշտապես եղել են բնակչության բացարձակ մեծամասնությունը: 1979թ. ԼՂԻՄ-ի բնակչության 75,9%-ը /123,1հազար/, իսկ 1989թ.մարդահամարով 76,9%-ը /145,5 հազար/ հայեր են եղել: ԼՂՀ-ում մարդահամարներ անց են կացվել 2005 և 2015թթ., ըստ որի բնակչության ավելի քան 99,7% կազմել են հայերը /137,4 հազար և 144,7 հազար/: Ներկայումս Արցախում ապրում են մոտ 146 հազար հայ:

ՎՐԱՍՏԱՆ: Հայերը Վրաստանի տարածքում ապրում են անհիշելի ժամանակներից, իսկ օրինակ Ջավախքում, Թբիլիսիում, Բաթումիում՝ նույնիսկ կազմել են բնակչության բացարձակ մեծամասնությունը: ԽՍՀՄ կազմավորումից սկսած մինչև 20-րդ դարի 70-ական թվականները հայ բնակչության բացարձակ թիվն անընդհատ ավելացել է:Սակայն դարի 70-ական թվականների վերջից, թեկուզ և փոքր ծավալներով հայ բնակչության թիվը սկսեց նվազել: 1989թ-ին Վրաստանում ապրում էր 441 հազար հայ, որը կազմում էր երկրի բնակչության 8.1%-ը: 2016թ-ին ամփոփիչ տվյալներով Վրաստանում ապրում էր 168 հազար հայ կամ երկրի բնակչության 4.5%-ը /առանց Աբխազիայի և Հարավային Օսիայի/: 2018թ-ին Վրաստանում հայ բնակչության թիվը գնահատվում է 158 հազար,այսինքն 2.8 անգամ ավելի քիչ քան, ԽՍՀՄ փլզումից առաջ էր: Հայերի թիվը կրճատվել է ինչպես ամբողջ երկրում, այպես էլ հայաշատ Ջավախքում, մայրաքաղաք Թբիլիսիում և երկրի խոշոր քաղաքներում: Ի դեպ հայ բնակչության նվազմանը զուգահեռ աճել է ադրբեջանցիների թվաքանակը:

ԱԲԽԱԶԻԱ և ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԻԱ: Հայերն Աբխազիայում և Հարավային Օսիայում բնակվել են վաղնջական ժամանակներից: Վրաստանի կազմից դուրս գալուց հետո հայ բնակչության թիվն այստեղ ևս կրճատվել է: Վրաստանի կազմում Աբխազիայի հայ բնակչության տեսակարար կշիռը գնահատվում էր շուրջ 15%, կամ բացարձակ թվով ավելի քան 76,5 հազար: Ըստ 2003 և 2011թթ. Աբխազիայում իրականացված մարդահամարների հայ բնակչության բացարձակ թիվը կազմել է համապատասխանաբար 44 հազար 870 և 41 հազար 864: 2018 թ. գնահատմամբ Աբխազիայի բնակչության թիվը կազմում է շուրջ 244 հազար, որից հայերը՝ 41 հազար: Հարավային Օսիայում ապրող հայերի թիվը մեծ չի եղել: 1979-1989 թթ. հայերի թիվը մոտ հազար էր, կամ բնակչության 1%-ը: Ներկայումս այստեղ ապրում է մոտ 400 հայ /2015թ. մարդահամարով 378 կամ 0,7%/, որի բացարձակ մեծամասնությունն ապրում է Ցխինվալիում /90% ավելի/:



1989թ



2018թ

Նկ. 2 Հայ բնակչության բաշխումը հարավային Կովկասի մայրաքաղաքներում 1989 և 2018 թվականներին

Բացի մայրաքաղաքներից մեծ թվով հայեր ապրել և ապրում են Այսրկովկասի առավել խոշոր քաղաքներում:Իրականացված դիտարկումներն ու վերլուծությունները ցույց են տալիս որ վերջին 30 տարիների ընթացքում այդ քաղաքներում ևս նվազել է հայ բնակչության բացարձակ թիվը /40000-ով/ և տեսակարար կշիռը /4%-ով/ : Այդ քաղաքներում ներկայումս ապրող ավելի քան 1,6միլիոն բնակչությունից հայերը կազմում են ընդամենը 280 հազարը (ներառյալ Գյումրին և Վանաձորը): Երբեմնի հայաշատ Գանձակը, Նախիջևանը, Սումգաիթը ամբողջովին հայազրկվել են: Էականորեն կրճատվել են Քութայիսի,Սուխումի,Ռուսթավի հայ բնակչության թիվը: Շուրջ 2 անգամ պակասել է բնակչության թիվը Գյումրիում և Վանաձորում:



Նկ. 3 Բնակչության ազգային կազմի բացարձակ թվի փոփոխությունները /շարժը/ Հարավային Կովկասում, ըստ երեք գլխավոր ազգությունների 1979-2018թթ

2018 թվականի գնահատմամբ տարածաշրջանում ապրում է 3 միլիոն 347 հազար հայ, որը 14,5% -ով ավելի քիչ է քան ԽՍՀՄ փլզումից առաջ էր: Դա նշանակում է որ հայերս տարածաշրջանում պակասել ենք ևս 570 հազարով: Հվ.Կովկասի բոլոր

սուբյեկտներում հայերը տեղաբաշխված են. 3,002միլիոնը ՀՀ–ում, 155հազարը Վրաստանում, 146 հազարը ԼՂՀ-ում, 42 հազարը Աբխազիայում, 0,4հազարը Հարավային Օսիայում և 0,1հազարը Ադրբեջանում:

Եզրափակում

ԽՍՀՄ-ի փլուզումից առաջ 80-ական թվականներին Հայաստանի բնակչության բնական աճը կայունացել էր և կազմում էր 1,4-ից- 1,5, %,կամ բացարձակ թվերով տարեկան 45-50 հազար մարդ: Մեխանիկան շարժը ևս դրական էր: 20-րդ դարի 80-ական թվականներին տարեկան արտագաղթում էր 8-12 հազար, և ժամանում 15-20 հազար մարդ: Մեր գնահատումներով 90-

ական թվականների սկզբներին ՀՀ-ի բնակչության թիվը 3մլն.500 հազար էր: Կանխատեսվում էր, որ 2000 թվականին Հայաստանի բնակչության թիվը կանցնի 4,6մլն-ից, իսկ 2015-ին՝ 5մլն-ից[2]: Ներկայումս առնվազն պետք էր կազմեր 5,3 մլն մարդ հաշվի առնելով ժողովրդագրական հիմնական ցուցանիշների զարգացումները: Ազգային կազմի տեսակետից այդ բնակչության ավելի քան 90% կկազմեին հայերը: Մոտակա տարիներին ՀՀ-ի բնակչությունը և այստեղ ապրող հայերի թիվը մեծ փոփոխությունների չեն ենթարկվի և կտատանվեն մոտ 3մլն –ի սահմաններում, հաշվի առնելով սպասվող բնական և մեխանիկական շարժերը, երկրի սոցիալ-տնտեսական, սոցիալ- քաղաքական իրավիճակներն ու կառավարության կողմից իրականացվող ժողովրդագրական քաղաքականությունը: 2018 թվականի գնահատմամբ տարածաշրջանում ապրում է 3 միլիոն 347 հազար հայ, որը 14,5% -ով ավելի քիչ է քան ԽՍՀՄ փլզումից առաջ էր: Դա նշանակում է որ հայերս տարածաշրջանում պակասել ենք ևս 570 հազարով: Հվ.Կովկասի բոլոր սուբյեկտներում հայերը տեղաբաշխված են. 3,002միլիոնը ՀՀ–ում, 155հազարը Վրաստանում, 146 հազարը ԼՂՀ-ում, 42 հազարը Աբխազիայում, 0,4հազարը Հարավային Օսիայում և 0,1հազարը Ադրբեջանում:

Այսպիսով՝ հարավ Կովկասյան տարածաշրջանում աստիճանաբար նվազում է, թե հայ բնակչության բացարձակ թիվը, և թե դրա տեսակարար կշիռը տարածաշրջանի բնակչության մեջ: Այս գործընթացը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնց մեջ գլխավորը աշխարհաքաղաքականն էր՝ԽՍՀՄ պետության փլուզումը, իսկ մյուս գործոնները ածանցյալ են գլխավորին, որոնց մեջ առավել կարևորներն են. ա/ պատերազմականը, բ/սոցիալ-տնտեսականը, գ/ բուն ժողովրդագրականը և դ/ սոցիալ հասարակական գործոնները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Գ.Ե., Հայաստանը և հայերս աշխարհում, Երևան-1992
2. Խոջաբեկյան Վ. Ե. Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի պրոբլեմները, Երևան-1976:
3. Մելքումյան Ս.Ա., Հայաստանի հանրապետության և ԼՂՀ –ի տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան 2005

4. Վալեսյան Լ.Հ. Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն , Երևան-1988
5. Перепись населенния СССР 1926-1989 гг.
6. Итоги переписи населения Азербайджана 1999 и 2009 годов.Баку 2011г.
7. Перепись населения Грузии 2002г. и 2014г.Тбилиси 2016г.
8. WWW. Демоском, Weekly
9. WWW.countrymeters. info /ru/ World – Население земли- счетчик население мира.

ARMENIAN POPULATION DUNAMICS IN THE SOUTH CAUCASUS IN THE POST-SOVIET TIMES

ANDREASYAN A.S.

Abstract

The article describes the dynamics of the Armenian population in the post-Soviet times in the South Caucasus region. The artice includes the comparative charachteristics of population dynamics and movement trends in Soviet and post-Soviet years. Changes in the population are presented individually in the three South Caucasian republics-Armenia, Azerbaijan and Georgia as well as the partially recognized or unrecognized but de facto existing Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia, which were formed after the collapse of the USSR, within the framework of the article, the number of population changes are presented separately in the capitals and 10 largest cities of the South Caucasus. Population dynamics are presented in separate tables and diagrams. In the final part of the article are mentioned the analysis of changes in the Armenian population in the region and current trends. Also are mentioned the main reasons for the decrease in the Armenian population and possible forecasts for the upcoming period.